

ՀՈՎՀԵՆԻՔ

ԲԱԿԱՆՏԵՂԻ


ՀԱՅԱՍՏԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆ

1942

Ա



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԻՐՈՅ

ԲԱՆԱՍՔԵՂԾԻ  
ԶԱՑՆԼ

A/50085



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
1942

**ОВ. ШИРАЗ**  
**ГОЛОС ПОЭТА**  
**(На армянском языке)**  
Армгиз, Ереван, 1942

ԹԱՆԱՍՏԵՂՆԾԻ ԶԱՅՆԸ

Ես բանաստեղծ եմ, երկնքի որդի,  
Երկինքը մայրս է, Երկիրը՝ հայրս,  
Ես գիտեմ լուսե լեզուն աստղերի,  
Եվ արտօնաների դայլայլ է ձայնս :

Բայց Ես որ Երկնից Երկիր բերեցի  
Անմահ արեի խորհուրդը անհուն,  
Ես որ դրախտի դռները բացի,  
Եվ նրա ճամբան ցույց տվի մարդուն, —

Եվ որ Երգեցի, Երկրպագեցի,  
Մարդուն միակը, որպես արևին,  
Եվ իմաստության իր թագով ոսկի,  
Կարգեցի արքա ողջ տիեզերքին, —

Ես որ գուրգուրել, չոյել ուզեցի  
Արեի նման՝ աշխարհը դալար,  
Ես որ սրտիս մեջ ծովից խոր լացի  
Ուրիշի մի շիթ արցունքի համար, —

Օ, մարդիկ, Ես որ մահվան դեմ ելա՝  
Անմահությունը տենչալով՝ մարդու,  
Ես ատելությամբ կանչում եմ ահա  
— Առեք կայծակից որեր ահարկու  
Հյուսիս, արևելք  
Մարշավ ելեք, —

Ելել է կյանքի թշնամին դաժան,  
Նրա դեմ մահվան անդունդը բացեք,  
Գահապետ յնկնի անդունդը մահվան,  
Դուք նրա մահով կյանք ինկարկեցեք... .

... Ես որ ախրեցի մահով մի ծագկի,  
Ես որ մըջունը չարի ոտնատակ,  
Ես մռնչում եմ՝ նա պիտի մեռնի  
Եվ հավերժ մնա մահվան ոտքի տակ:

Ոհ, նա ուղում էր տիեզերքն անհուն  
Խեղդել խավարով այնքան դժնազեմ,  
Որ արեն անզամ խարխափի մթնում  
Եվ ես լուսեղեն մի խորշ չգտնեմ,—

Հե՛յ, ոտքի ելեք, թվով ասազերի  
Հյուսիս, արևմուտք,  
Հարավ, արևելք  
Եսլ լուսավառվեք ընդդեմ խավարի,  
Նրան մոռացման անդունդը տարեք

Ես կհամբուրեմ շրթունքը մահի,  
Բայց նրան ներել չեմ կարող երեք:

### ՀԵՐՈՍՈՒԹՅՈՒՆ

Նվիրում եմ Կարմիր Բանակի Տաջարի  
Մարտիկներին, որոնք քայլ առ քայլ, զյուղ առ  
զյուղ, քաղաք առ քաղաք բնաջնջում են ատելի  
թենամուն և ազատում հայենի հողը թշմառ  
կումարից...

Հերոսություն, դու իմ դարի անմար ողի,  
Իմ քնարս քո դափնու դեմ կխոնարհեմ,  
Եվ կամարով արեւաթաղ այս երկնքի  
Թռղ որ հիմա մատաղ զլուխող պարկեմ:

Դու վառվել ես Գայլ Վահանի Երակներում  
Խքրե արյունն առյուծասիրս իր պապերի,  
Շողացել ես Մուրոմեցի լուրթ աչքերում,  
Հերոսություն, դու սուրբ ավանդ հին դարերի:

Ելար մեր խուլ խրճիթներից մի առավոտ  
Ու վառվեցիր, ջահը դարձար Հոկտեմբերի...  
Անմահացան քեղնով սրտերն այն կրակու,  
Որոնք մահը դարձան դաժան պալատների:

Ես քեզ տեսա և դաշտերում խաղաղավետ,  
Զինջ օրերի դալաթներում որպես դինի՝  
Շողում էիր ուրախության ու սիրո հետ,  
Ու դառնում մեղք ու ոսկեհունձն իմ հայրենի:

Սակայն այսօր՝ հողմերի մեջ ու կրակի  
Տեսնում եմ քեզ արդար թրի պես մերկացած՝  
Հզոր ձեռքում իմ գյուղազուն հայրենիքի, —  
Որ խոյացավ սոսիի դեմ այս դաղակած:

Եվ դարեկ, օ, դարեկ իմ հայրենիք քո սուլն արդար՝  
Սիրտը խոցիր այս անարդար հորդաների,  
Այս պայքարում, այս կովի մեջ հողմաղալար  
Ոսոխ սրտերն են պատյանը քո հաղթ սրի:

Օ, դարեցեք, օ, դարեցեք կարմիր քաջեր,  
Բոց զավակներ մեր գյուղազուն խմաստունի,  
Հերոսությամբ պապեցեք երկիրը մեր,  
Հերոսությամբ դարձեք աստղերն այս անհունի:

Շաշիր, շողա և շառաչիր ինչպես կայծակ՝  
Մեր սրտերի ատելության ամպի միջից,  
Դու Հավունի սրբազն թուր հերոսության,  
Ոսոխն արդեն խուճապում է քո շառաչից:

Նա գունդ առ գունդ մոխրանում է և դու անշեջ  
Բոցկտում ես աչքերի մեջ քաջերի քաջ,  
Դու այնպես ես նայում մահվան մութ աչքի մեջ,  
Որ թվում է թե մահ չկա աչքիդ առաջ:

Դու գաղտնիքն ես անմահության ու խոյանքի,  
Օ, դու իմ սուրբ հայրենիքի ահեղ զբահ,  
Ել առավել բորբոքիր հուրն հաղթանակի  
Ամենազատ ու լուսատենչ երկրի վրա:

Դու ևս այսօր մեր գյուղազուն զորքի ողին,  
Քո կրակով ալեկորն է ջահելանում,  
Հերոսություն, քո կրակով վառ պատանին  
Կոմիր դաշտում հսկային է հավասարվում:

Եվ չի կորչի քաջ մարտիկի ոչ մի անուն,  
Հերոսություն, քո վահանի վրա զրվող  
Խմասությունն է հիմա քեզ առաջնորդում  
Դեպի լեռը մեր հաղթության արևաշող:

Հերոսություն, դու իմ գարի անմահ ողի,  
Թող քնարս իմ գլխի պես քեզ խոնարհեմ  
Եվ նոր ծաղկող դափնիներովդ հաղթանակի  
Հողագնդի տանջված դլուխը պսակեմ:

### Տ Ա. Ր Ե Ր Պ

Օ, երկինք, պսակ հաղիտենության,  
Օ, աստղեր՝ զանգեր անհուն երկնքի,  
Արեգակ, հավերժ ակունք զորության,  
Դու լուսե ստինք կույս տիեզերքի,  
Օ, լեռներ, զահեր դուք հավերժության,  
Օ, խոլ ջրվեժներ, բաշեր բնության,  
Օ, վեհ անտառներ, զրահներ դարնան,  
Եվ դուք մրգիկներ համայն տարերքի,  
Մի՞թե չեք տեսնում այս դժոխաձայն,  
Այս դժոխաբուխ իսավարն ամենի,  
Որ ամպ է դարձել արևի ընդդեմ,—  
Ծնդդեմ լուսաբուխ նոր տիեզերքի,  
Եվ մարդու, մարդու, օ, մարդու ընդդեմ,  
Եվ լուսո ընդդեմ և ընդդեմ կյանքի,  
Եա կուզե ծածկել արևն հաղիտյան

Յիւղերքն անել իրեն հայրենիք,  
Եվ ծունկի բերել Մասիսներն համայն,  
Եվ որպես արև բարձրանալ երկինք:  
Մթաղնիք, երկինք, դու նրա գլխին,  
Քո անթիւ աստղերն հանց կովի դանդեր՝  
Թող զանդահարեն վրեժով ուժդին,—  
Զարթնեցեք, ելեք, արև աշխարհներ,—  
Մուեղնիք, տարերք հավիտենության,  
Թող արևներդ խավարը ցըեն  
Եվ դուք, վահանված դրանիտ լեռներ,  
Աչեղ պայթեցեք ոսոխի դիմին:  
Եյ, չեյ, շարժվեցեք կանդնած անտառներ,  
Ալեկոծվեցեք, ծովեր մթաղին,—  
Ազատ տիեզերքն ուզում է բանդել  
Այս խավարը ժանտ վառողի ամպով,  
Եվ հայրենիքներն ամեն աղարտել,  
Տիեզերքն համայն հեղեղել մութով:  
Եյ, լույս ջրվեժներ, տարերքով անհուն  
Առավել վառվեք հրեղեն թափով  
Իմ հայրենիքի բյուր երակներում.  
Խուժիր բնություն, մրրկվիր այլպես,  
Իմ հայրենիքի կուռ բաղուկներում,  
Քո ողջ տարերքով ել կովի հանդես,  
Հանիր մութի դեմ արևներդ ամբոց,  
Իմ հայրենիքով դու պիտի հաղթես,  
Խուժիր բնություն, ելիր ալեկոծ,  
Խոյացիր արև, պայթեցեք լեռներ,  
Մավեր, բարձրացեք, խեղեցեք նրան,  
Օվկյաններ, բացեք անդունդները ձեր՝  
Վեշապների պես կուլ տվիք նրան,  
Նզովքս նրան թող պատահնք լինի  
Եվ մոռացումը հավերժ գերեղման . . .

### ՄԵՐ ԼԵՌՆԵՐԻ ՊԵՍ

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես խուժեցեք վայրագ,

ՄԵՆՔ ՃԵՐ ՊԵՏ ԼԵՄԱՆՔ ԺԵՐ ԼԵՆՆԵՐԻ պԵս,  
ԴՈՒՔ ՀՈՂԺԵՐԻ պԵս ո՛՛ՆԱԳԻՔ վայրագ:

ՄԵՆՔ ՀԱՎԵՐԺ ԵՆՔ, ԿԱՆՔ ԺԵՐ ԼԵՆՆԵՐԻ պԵս,  
ԴՈՒՔ ՀՈՂԺԵՐԻ պԵս կԽՈՐՀԵՔ վայրագ:

### ԵՍ ԷԼԻ ԽԳԱՎ

Ես կոիմ կերթամ մութ մըրիկի պԵս,  
Բայց իմ ծաղիկներ, ես էլի կդամ,  
Կը չողեմ այնտեղ, կը կարոտեմ ճեզ,  
իմ պաղ աղբյուրներ, ես էլի կդամ:

Մայրիկ ջան, մայր ես, բայց դարդ մի անի,  
Առյուծ ես ծնել, ես էլի կդամ,  
Առւրս թշնամու սիրալ կը հանի,  
Բաղուկս է ջանել, ես էլի կդամ:

ՀԵՅ, իմ Ալաղյաղ, զու խմ հորս պԵս  
Ինձ հեռվից նայիր, ես էլի կդամ,  
Գիտեմ որ ժեսուս թիկունքս դու ես,  
Թաղդ վեր պահիր, ես էլի կդամ:

Միայն թե դուք կուշտ ու խաղաղ մնաք,  
Իմ լավ բայիկներ, ես էլի կդամ,  
Ճիրաղ թշնամուն կասնեմ սորիս տակ,  
Աբովս ծաղիկներ, ես էլի կդամ:

### ԵՍ ԶԻՆՎՈՐԸ

Կա մատյաններում իմ հայրենական  
Զըռւյց մի անժեռ թե պարզ թե խորին,  
Իբրև մի դիշեր քնով դյութական  
Երբ որ քնած էր մեր աշխարհը հին,—  
Թշնամին մեր սուրբ սահմանն է անցնուան  
Եվ դավ է դնում ահեղ ու դաժան,

Քայց ժողովուրդն է զլոհի սստնում  
իր հզոր զավակ զորքեց անբաժան:  
Եվ այդ խոլ ժամին, նիզակը ձեռքին  
Մի կաղ լեռնցի վազում հեղոցով,  
Ռւզում էր հասնել կովող զորքերին,  
Որ կովում էին զայրույթի բոցով:  
Հանկարծ մուժ մի ձայն ձայն տվեց այսպես,  
Եվ ձայնը կարծես զալկում էր, դողում,  
— էյ, ինչպես պիտի դու կովից փախչես,  
Թէ ոտքիլ նման խելքը էլ է կաղում...  
— Քո սիրան է կաղում, ով վախլուկ տխմար,  
Հնչեց կաղ մարդու ձայնը խստադեմ,  
— Կովի չեմ գնում փախչելու համար,  
Ֆոխով եմ դնում, որ կովեմ, հաղթեմ:

### ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԸ

Լուսինն է լալիս սև ամպի ցողով,  
Քամին է ողբում կտրիծի վրա,  
Բնկել է նա չար թշնամու սրով,  
Յավից հառաշել նժույզը նրա:

Բայց նրա սուրը չմտավ պատյան,  
Եվ կովի գաշտում վրնջում է ձին.  
Անմահ անունը իր սրի նման  
Թշնամու սիրով խոցում է կրկին:

Նրա եղբայրն է զայրույթով անհուն  
Հեծած կայծակ նժույզը նրա  
Եղբոր վրեժը հանելու թուչում  
Թաղմի մոայլ դաշտերի վրա:

Լուսինն է սղում սև ամպի քողով,  
Քամին է ողբում կտրիծի վրա,  
Այնինչ եղբայրը կդնի շուտով  
Հաղթության պսակն իր եղբոր վրա:

Հավատում եմ քո հավերժին, իմ հայրենիք,  
Դու հավերժ ես ինչպես արև, ինչպես օվկյան,  
Դու հավերժ ես ինչպես արև, ինչպես երկինք,  
Դու ժամանակն ես անվախճան:

Հավերժ պիտի ձյունը շողա ձեր դահերին,  
Իմ հայրենի հաղարակունք կանաչ լեռներ,  
Դուք հավիայան կյանք սիրոի առաք աղբյուրներին,  
Հավերժ պիտի դուք կարկաչեք, փիրուղի ջրեր:

Պիտի ծաղկեք, իմ հայրենի գաշտեր կանաչ,  
Ու դուք երրեք չեք կարմրի մեր արյունով,  
Հավերժական Մասիսների աչքի առաջ  
Զեր հացն արդար միշտ կօրհնովի կարմիր դենով:

Ինչպես այսօր՝ հավերժ պիտի խովոդ գնդա  
Ու չի կարող ո՛չ մի ոսոխ հոգդ պղծել,  
Առյուծի է դառնում անդամ սիրոն աղջկա  
Ու դրախտը քո դեմ արդեն դուռն է բացել:

Հավատում եմ, իմ հայրենիք, հաղթ կմնաս,  
Քո ձորերդ դերեզմանն է ոսոխների,  
Քո լեռներդ՝ փառքի այսւներն են երկնահաս  
Կյանքիդ համար լնկածների...

ԴԱՅԱԹԻ ԹԱՐԱՆԱՑԲԱ

Կպարծենամ հայրենիքիս անցյալներով,  
Նրանք լիքն են ինչպես երկինքն Արարատյան  
Դարեր վառիոդ հաղթահակի լույս աստղերով,  
Անուններով հերոսական:

Կպարծենամ հաղթ աղեղովն իմ նախահոր,  
Սուրբ անունով հայոց Հայկի տիտանական,  
Որ պատկած է՝ հանց Մասիսն այս ալեոր  
Փառքի թաղով հավերժական:

Կպարծենամ հայոց ողու լույս գանձերով,  
Մատյաններով մադալաթյա աղոթքների,  
Հավիտյան նոր երդի Գողթան հին քնարով,  
Անմահ ու սուրբ գուսանների:

Կպարծենամ Դավիթի թրով կայծակեղեն,  
Որ շառաչեց դավերի դեմ տերունական,  
Որ մեջք տվեց, դարձավ երկրիս վեմ ապավեն,  
Եվ պիտ չողա հուրն հավիտյան:

Կպարծենամ և թոռներով Դավիթի անմահ,  
Որ ճիբրն են այսօր անձում հուր հողմերի,  
Որոնց ամեն ոտնահետքը երկրի վրա  
Գերեզմանն է ոսոխների:

Եվ ես ցմահ կպարծենամ երկրե երկիր  
Իմ ժողովուրդ, քո անունով և վեհ ու հեղ,  
Թող քանդակեն այս՝ ինձ իբրև տապանագիր  
Կպարծենամ որ հայ եմ ես:

### Ա.ՄԵՆԱՆՎԱՆՆԻՐՍԱՆԱՆ

(Բալլադ)

Հնուց երդ է, բայց նորոց է հավիտյան,  
Արեւելքի արեւաթաղ արքան ծեր  
Ուներ երեք կանաչ կտրիճ որդիներ:

Ու ծաղումից մինչ մայրամուտ ուկեման  
Արեն ինչքան աշխարհ տեսներ՝ իրենց էր  
Ու անհաղթ էր էն բարձմահաղթ արքան ծեր:

Բայց բախուը չէր որ ժպտում էր միշտ նրան,  
Ասում էին, թե իր ձեռքում նա ունի  
Հրաշաղուծ հրեղեն թուրն Հավունի:

Ու ծաղկում էր հայրենիքում ամեն բան,  
Բարի արքան միշտ սբբաղան իր թրով  
Կյանքն հեղում էր խաղաղության վարերով:

Սակայն Հաստիլ և օրը խոր ծերության,  
Եվ մահամոտ գյուղազունը հառաջեց,  
Արդիներին ահա իբեն մոտ կանչեց.

— Ով դուք սյուներ՝ լուս ամրոցի իօմ անկան,  
Հասպէհաս է ահա խաղաղ օրհամն իմ,  
Ամեն դիշեր ես ինձ մեռած կտեսնիմ:

Որդիները մուայլ մտքի մեջ ընկան,  
Սակայն խոսեց նորից արքան ծերունի,  
— Բայց ո՞ր մեկիդ թողնեմ ես թուրն Հավլունի:

Որդիները նորից մտքի մեջ ընկան,  
Սակայն արքան նրանց նայեց ժպտաղեմ  
Ու այս տեսակ պայման դրեց նրանց դեմ.

— Ով որ ինձ տա մի ճշմարիտ պատասխան,  
Թե ամենից ինչն է անուշն, անհունի,  
Նրան կտամ սրբազան թուրն Հավլունի:

Որդիները անհուն մտքի մեջ ընկան,  
Ու խորհեցին խորին խոհեր օրն ի բուհ,  
Թե ամենից ինչն է անուշ աշխարհում:

Յոթը դիշեր անհուն մտքի մեջ ընկան,  
Ելան երկը երկիր անցան ինչպես դեմ,  
Ամեն մեկը մի բան դտած, եկալ ետ:

Ու մեծ որդին այսպես խոսեց խնդաձայն.  
— Ով հայր անմեռ, տիեզերքում այս հսկա  
Կին ու դինուց ուրիշ անուշ բան չկա...

Միջնակ որդին այսպես ասաց մեղմաձայն.  
— Ով բարի հայր, ներող եղիր, թե ասեմ  
Մայրն է անուշն ամենից քաղցրն ու վսեմ...

Փոքրն ասաց՝ չկա ուրիշ անուշ բան,  
Քան հայրենիքն, ով հայր արքա իմաստուն,  
Առանց նրան՝ ինչպես թուշունն առանց բուն:

Փոքրի խոսքը շաբունակեց ծեր արքան .  
— Առանց նրան՝ ինչպես պատյանն առանց սուր,  
Առանց նրան՝ ինչպես որ ձուկն առանց ջուր :

Եվ համբուրեց փոքր որդուն ծեր արքան ,  
Նրան թողեց հրեղեն թուրն զավլունի ,  
Ինքը մեռավ ու սուզվեց գիրկն անհունի :

Եվ այնօրից փոքր որդին հաղթակամ ,  
Բազմեց գահին առած թուրը զավլունի ,  
Աշխարհ բերեց անհայտ գանձերն անհունի :

Իսկ հայրենիքն անուշ ծաղկեց անվախճան ,  
Եվ թունեթոռ զավլունի թուրն էր շողում  
Եվ թշնամին դալկում էր դեմն ու դողում . . .

Հնուց երդ է , բայց նորոց է հավիտյան՝  
Տիեզերքի անուշն ես դու , չայլինիք , —  
Առ սիրոս դոհ , օ , դու սկզան սըրության . . .

### ՏԻԳՐԱՆԻ ՄԵԾՅԻ ՎԻՇՏԻ

(Դրվագ)

Պատմության մատյանն հավերժ է դառնում  
Երբ սերունդներն են ավանդում իրար ,  
Եվ ահա իմ դեմ հարությունն առնում  
Կանգնում է արքան և բարի և չար ,  
Կանչում է ցրված իր իշխաններին ,  
Նստում գետափին՝ դինի է խմում , —  
Ելենում էր Արագն ուրախ ափերին՝  
Կարծես արքային դինի է բերում :

Եվ խմում էին , երբ որ ամրոցից  
Ուրախ լուր բերեց մի թուխ սուրհանդակ .  
— «Թագալոր հայոց , Գողթան զավառից  
Քո զիրկն են թսել երեք նոր սոխակ՝  
Երեք երգիչներ և կուզենային  
Կենացն արքայի զարդարել երդով

Ու դովզը կարդալով հայրենաց գահէն՝  
Աշխարհը լցնել արքայիդ փառքով։

Արքան մտախոհ նայեց բաժակին  
Եվ սուրհամնդակին չշնջաց հանդարտ։  
— «Թող գան, իմ սիրոս տեղ ունի երդին»—  
Երդն էլ դինի է, երբ տիտոր է մարդ,  
Խմբնք, իշխաններ, նայիրյան դինին,  
Գինով ու երդով՝ սիրոս է անխարդախ»։  
Եվ լոեց արքան, գնաց պատանին,  
Բաժակներն էլլի դնդացին ուրախ։

Եվ հայտնվեցին երդիչներն ահա  
Երեքից մեկը հայրն էր երկուսի, —  
Թափառիկ ու կույր մի դուսան էր նա,  
Հանց հաղարերորդ թոռն Հոմերոսի,  
Երկուսը հզոր իր թևերն էին  
Ու ճախրում էր նա ամբոցից ամբոց,  
Գարուն էր երդում իր հայրենիքին  
Եվ սրտերի մեջ վառում խինդ ու բոց։

Եվ Տիգրան մեծը ձայն տվեց նրանց.  
— «Երդեցք այնպես, որ գետը կանգնի,  
Այնպես, որ վայրադ վազը կատաղած  
Կանգնի կես ճամբին և ականջ դնի, —  
Բայց պիտի երդել առանց բառելի»...  
Եվ լոեց արքան, թիկնեց դիխահակ,  
Եվ հեկեկացին այն դուսանների  
Տավիդներն ահա անուշ մի նվադ։

Նվազն հոսում էր մերթ այնպես քնքուշ,  
Ինչպես աստղերի լուսե մեղեղին,  
Մերթ այնպես խորին, այնքան թախծանուշ,  
Մերթ հորդում էր նա, կանչում մոլեզին, —  
Մերթ փոթորկում էր, ծովի պես դալիս  
Իր գեմը ցցված ժայռերին խփում,  
Ասես առյուծ էր, որ մոնչալիս  
Իր նմաններին էր չուքչն էր խմբում...»

Սակայն վերստին տեղի էր տալիս  
Եվ մեղմանում էր և մեղմ կարկաչում,  
Ասես մի վիշտ էր հիշում ու լալիս  
Եվ չգիտես ո՞ւմ իր գերկն էր կանչում:  
Եվ իշխանները՝ դիմով կլսարբած,  
Եվ հայոց արքան մտախոհ ու լոռ  
Այն նվազի տակ մի պահ՝ որբացած  
Մանուկների պես թափծեցին տիսուր...

Եվ երբ ուրարուխ մեղեդին լոեց,  
Երբ դինի տվին այն երդիչներին,  
Արքան գալաթը տիսուր ցած դրեց,  
Այսպես հարցըրեց իր իշխաններին.  
— Ով իմ իշխաններ, ասացեք դուք ի՞նձ,  
Թե ում ինչ պատմեց այս նվազն անբառ,  
Թե ինչ զգացիք այս տիսուր երդից,  
Որ մնացել եք այդպես վշտահար:

Եվ իշխանները խոսեցին մեկ-մեկ  
— Տեսա երդի մեջ մեկը շնչաց,  
Սյունյաց աշխարհում լուս ու սրտաբեկ  
ինձ էր սպասում աղջիկն իմ սիրած,  
Եվ լսում էի մրմունջը նրա,  
Ախ, նա արցունքով կսպասեր գալձիս,  
Այնինչ՝ ես օտար մի ժայռի վրա  
Շղթայված էի, ու փախել էր ձիս...

Մյուս իշխանը այսպիս չչնջաց.  
— Տեսա Շիրակում իմ մայրն էր լալիս,  
Թե աղիզ որդին՝ կռվի գնացած  
Ընկել է դուցե, որ տուն չի գալիս.  
Եվ օրը նրան տարի էր թվում,  
Այնինչ քաջարձիզ պանդուխտը նրա  
Արքաների հետ գինի էր խմում  
Եվ փառքն էր չողում միշտ նրա վրա...

Եվ այսպես ասաց իշխանը վերջին.  
— Նվազն ապագաս առջևս բերեց,

Ես տիրել էի Շիրակ ու Մծրին  
Եվ իշխան Գոռը սրիս խոնարհվեց,  
Եվ իմն էր բարին Տարնո դաշտերի,  
Եվ դու իմ զլիկին, ով բարի արքա,  
Դրեցիր մի թագ՝ կես թաղավորի,  
Բայց Ես վերստին քո ոտքերն ընկա...»

Եվ Երբ մեծ արքան ցնորդը լսեց  
Քառասուն զոռող իր իշխանների,  
Այն երդիչներին ախուր հարցրեց.  
— Մի՞թե հասկացանք ձեր երդը բարի:  
— Ոչ, արև արքա, երդիչներն ասին  
Եվ ծեր զուսանը այսպես չչնջաց.  
— Դու խոսիր արքա, մեր արև լուսին,  
Անբառ նվազա սրտիդ ինչ ասաց:

Եվ արքան մռայլ նայեց բաժակին  
Եվ իշխաններին շուրջը բոլորած  
Եվ սանձ դնելով զայրացած սրտին  
Լցրեց զավաթը և այսպիս ասաց:  
— Մռայլ մեղեղին այս երդիչների  
Չուներ կարոտը սիրած աղջկա,  
Մատյանն էր հայոց ճակատագրի՝  
Մեր հերոսական զալիքին վկա:

Տեսա երդի մեջ Ես հրաշք մի բան՝  
Իրքեւ թե բոլոր իշխաններն հայոց  
Եղբայրացել են արդեն միաբան,  
Արդեն միասիրտ և միասմբոց,  
Եվ մռոացել են արդեն քեն ու ոփ,  
Եվ չունեն նախանձ արդեն իրար դեմ  
Եվ ինչպես կովի արշավող ամբոխ  
Ոսոխի հանդեպ ելան խստաղեմ:

Ելան... Եվ տեսա այս անդամ արի  
Դուք ինձ հետ էիք, ով իմ իշխաններ,  
Բրազմի դաշտերում ելած պայքարի՝  
Իրքեւ հայրենի երկրի վահաններ,

Եվ արդեն հավերժ ձեզ կառք էր երդում  
Ոսոխի երկրում ձեր տեղը ցցված  
Եվ դուք փառավոր փրկած Նայերին  
Դիմել եք խումբ իմ չուրջը բաղմած  
Եվ նորից լսում այս երգիչներին:

Եվ ցոլում էին վահանները ձեր,  
Որոնց տակ արդեն ձեր սիրտն էր մաքուր  
Հանց արելի տակ Մասոյաց դաշտիներ,  
Ով իմ իշխաններ և դուք միասուր  
Հանց ցրված աստղեր՝ եկաք գիրկ դրկե՝  
Հյուսելու արմեն հայոց տերության,  
Եվ դարձաք տերը հայոց աշխարքի  
Հավասար ինչպես ձեր հզոր արքան...

Ա/ 50082  
Եվ լոեց արքան, ապա վեր կացալ  
Քառասուն ճուղքեր բերեց անստառի  
Եվ փշրեց... մեկմեկ և ապա դարձալ  
Նորից քառասուն ճուղք բերեց ծառի,  
Այս անդամ խմբեց և սեղմեց ծնկին,  
Բայց չի շրվեց... Խորհուրդն հասկացաք...  
Դիմեց դարմացած իր իշխաններին;

Եվ լոեց արքան... սակայն այն օրից  
Նա խմբեց բոլոր իշխաններն իրա,  
Բաղմի դաշտերում ելալ մըրկալեց  
Կայծակեց հնուց ոսոխի վրա.  
Եվ նրա տեղը հավիտյան ցցվեց  
Իր հաղթանակի դաշտերում կանաչ,  
Իրբև մի Մասիս և համբավն հնչեց  
Եվ դարձալ անստառ ահեղաշառաչ:

### ԹԱՅԻՉՆ ՀԱՎԵՐԺ. Է

Ի՞նչ, ուղում էիք մոտենալ նրան,  
Բորենու նման ոսնա՞լ դամբանին,  
Որ թանդարանն է հավիտենության,



Որ հավերժության ուղեղն է անգին,  
Որ սրբությունն է արքար մարդկության:  
Ի՞նչ, ուղում էիք ձեր ժանա խավաբով  
Մոտենա՞լ, մարե՞լ քնած արևին,  
Որ հեղեղել է երկերը լույսով,  
Որ քուն է մտել հավերժի թեին,  
Որ լիքն է հոգին ոսկի երազով:  
Դուք վանդալներ եք, դուք այդ կանեիք,  
Դուք այդ կանեիք՝ վայրի գաղաներ,  
Դուք այդ կանեիք, թե կարենայիք,  
Քի՞չ եք հանդցըել կանթեղները մեր,  
Դուք հավերժության լույսի թշնամիք:

Դամբանում մեր հայր արեն է քնած,  
Բայց նրա որդին՝ արեն այսօրվա  
Զեր հորդայի դեմ ելալ ահազնած,  
Զեր խավարի դեմ՝ լուսեղեն զրահ,  
Զեր ցնորքի դեմ՝ պայրույթով վառված:  
Եվ ընկաք՝ ինչպես ձյան հյուսքն է ընկնում  
Ամռան բոցաշունչ արեի առաջ,  
Եվ կրկին կավի ահեղ վաշտերում  
Լույսն հաղթանակի զրահներն հաղած,  
Մեր գնդերն ահա գրոհ են գնում:

Ի՞նչ, ուղում էիք նրա՞ն մոտենալ,  
Ձեր ժանա խավարի դժնի զրահով,  
Եվ հավերժության դո՞ւը կործանել  
Եվ կյանքը մկել և ծածկել մահով,  
Եվ հայրենիքը մութո՞վ չլիթայել:  
Կարո՞ղ եք հուրը արհից խլել,  
Կարո՞ղ եք ծածկել օվկյան ու երկինք,  
Իլյիչը հուր է, արեն է ծնել,  
Իլյիչն անդին է՝ ինչպես հայրենիք,  
Իլյիչն անմահ է՝ մայր հողն է ծնել  
Եվ կդա ժամը, — զգում եմ նրա  
Քայլերի դոփյունն աշխարհի միջով, —  
Զեղնից ոչ մեկը կենդան չի մնար,

Եվ հլյիչն անծիր իր հայրենիքով  
Տիւզերքի հետ կհավերժանա :  
Է՞նչ, ուզում էիք մոտենալ նրա՞ն,  
Բորենու նման ոռնա՞լ դամբանին,  
Որ թանըարանն է հավիտենության,  
Որ հավերժության ուղեղն է անգին,  
Որ սրբությունն է հանուր մարդկության,

Պ Ո Ե Մ Հ Ա Յ Ե Ր Ե Ն Ա Յ Ա Յ

Իմ հայրենի հինավուրց Մարմաշենի վանքի մոտ,  
Աւր գես կապրեն պապերիս գերեզմանները մամուտ,  
Մի խումբ խոհուն ջահելներ փորում էին հողն արդար  
Աւ սուրբ հողում հայրենի պեղում էին մի հին դար, —  
Հանում էին գործ հողեց հին զրահներ ժանդուած,  
Որ շողացել են մի օր կրծքի վրա իմ նախնյաց,  
Եվ սազմիկի ոսկորներ և գաստակներ հին տեղի,  
Եվ բութ պայտեր, ասպանդակ՝ արաբական նժույզի :  
Հանկարծ մի գանդ հայտնվեց ու գանդի տակ, իսկարում,  
Մի մազաղաթ երևաց, որ այսպես էր բարբառում, —  
— «Ասեմ ահա, մի դիշեր, նման մի մութ մըրիկի՝  
Արաբ բանակն հորդահոս՝ սահմանն անցավ Շիրակի,  
Եվ ոտնատակ հոշոտեց դյուտաշնարհը մեր կանաչ,  
Այրեց տաճար ու բագին, ցցի հանեց մեր կանանց,  
Արյան գետեր հեղեղեց արարն՝ արյան ծարավի,  
Եվ ես արյամբ հյուսեցի պատմությունը այդ կովի,  
Զեղ թուշեցի, սերունդներ, իբրև ավանդ գարեց դար, —  
Ես մեղապարտ մի դպիր և հին սազմիկ մի արդար»...

1.

Արադածի լանջերում, մինչեւ հեռու Հարսի սար  
Խշում էին անտառներն՝ ինչպես ծովը հողմավար,  
Իշխում էին կաղնիներն ու արջի՝ զեմ անտառում՝  
Վարագն իր սեպ ժանիքի ճերմակ գաշույնն էր սրում, —  
Անտառներում այդ ահեղ, գիշերն առանց ճրագի,  
Ճերչեկի պես կըրչեր շինականը Շիրակի...

Ահա ելալ անտառից ձյունապսակ մի որսկան,  
Բւսին՝ եղնիկ վերավոր, ձեռին՝ աղեղ որսկան,—  
Թափառել էր նա յոթն օր չքախմբով իր չքեղ  
Լոռու հեռու լեռների անտառներում թավշադեղ,  
Ելրակ մտավ վերստին ու աղյուրի մոտ, հանկարծ  
Գեմքը վշտով մշուշից ու գլուխը կախեց ցած,—  
Որբերի պես անտերունչ՝ տեսավ շուրջը խարույկի  
Հառաջում էր հալածված շինականը Ելրակի,—  
Մասուկները կրծքերին՝ մայրերն էին հեծեծում...  
Մեռնում էին ծերերը, քամին իր կուրծքն էր ծեծում...  
«Այս ի՞նչ բան է, ի՞նչ աղետ» ծեր որսկանը շնչաց՝  
Երբոր նրան մոտեցավ մի ծերունի զլխարաց,  
— «Ով հայր իշխան, ինձ ներիր՝ թե լուր հայտնեմ քեզ տիսուր,  
Երկրի բախտից մեր անբախտ՝ թե սուտ լինեմ՝ մահս տուր,  
Հենց այս զիշեր, զիշերով, աման մի մութ մրբիկի  
Արար բանակն զորդահոռ՝ սահմանն անցավ Ելրակի,  
Սահմանն անցավ, հեղեղլից, Ելրակին արավ ստնատակ,—  
Ավարառեց ամբոցներն՝ իբրև յոթը տարվան հարկ,  
Ահա ամբոխն հալածված՝ փախավ դուբերն անտառի,  
Ամբոխն հաղիվ մի գետ էր, ծով էր բանակն արարի...  
Լոեց մի պահ ծերունին ու զլուխը կախեց վար,  
Արցունքն ընկավ աչքերից, ապա խոսեց վշտահար.  
— «Ներող եղիր, ով իշխան, թե ճշմարիտն ասեմ քեզ,  
Չար է որդին քո անդին, աներեսույթ չարքի պես,—  
Արդուղ ձեռքով են տարել քո բերդ երկրի բանալին»...  
Ասաց, զլուխն ալեսը լուռ խոնարհեց իշխանին,  
Եվ առավել մոայլից ծեր իշխանը Ելրակի,  
Կայծակեցին աչքերը խավարի մեջ իր գեմքի,  
Եվ չիմացավ թե ինչպես ձեռքից աղեղն ընկավ ցած.  
— «Օչ, իմ որդին, աստված իմ» դասնակսկիծ մոնչաց,  
Ու եղնիկը թողնելով սովահալած ամբոխին,  
Առավ աղեղն իր արդար ու ցած իշավ զայտագին...

## 2.

Բայց իշխանը դայլի դեմ Ելրակ մտավ իբրև դառ,  
Տեսավ ամենն իր աչքով՝ ծալոյալ շրջեց վշտահար,  
Պտավ դժուղերն իր այրովով ու չդտավ իր որդուն.  
Աչքից՝ զայրույթ ու կրակ, սրտից արյուն էր կաթում:

Տեսավ հեռվում՝ էր չքեղ կապույտ ամբոցն էր ծխում,  
Եվ զալաթին՝ արարի գոռող դրոշն էր ծփում,  
Պարսպի տակ ավարը՝ ցորեն, ոսկի՝ շեղջված,—  
Եվ այս ամենն իշխանին դժնի երազ մի թվաց:  
Եվ մինչև լույս իշխանը շիջեց տիուք, գլխահակ,  
Եվ ասեա՞ հողն հայրենի հառաջում էր ոսքի տակ,  
Դեռ ծխում էր կրտմայրին, ծխում էին դաշտ ու ձոր,  
Եվ ծխի մեջ իշխանը տեսավ մի սիպ ձիավոր,  
Որ թռչում էր սարն ի վեր՝ ինչպես ճերմակ աղավնի,  
Եվ աղավնու թևի պես բացվեց սիրութ իշխանի:  
— «Կանդնիր, կանդնիր, ձիավոր», կանչեց իշխանն անհամբեր,  
Ու ձին սանձեց ու կանդնեց ձիավորը սկաներ,  
Որ իշխանի ձիապանն ու կորին էր Ծիր Վյուզի,  
Եվ իշխանի որդուն էր տանում դատին ամբոխի...  
Եվ մինչ հայրը իր որդուն կմոտենար մուայլված  
— «Սա էր Հանձնել բանալին» ձիավորը շնչաց:  
Սակայն հայրը կարոտով գրկեց գլուխն իր որդու,  
Ու չչնջաց. «Իմ որդի, ճշմարիտը խոսիր դու, —  
Դո՞ւ ես Հանձնել բանալին, դո՞ւ ես Հանձնել, բայց ինչպե՞ս, —  
Հայրենիք վա՞տ էր շատ, թե մի ցավ էր տանջում քեզ»:  
Մինեց որդին իշխանի ու գլուխն կախեց ցած,  
Սիրութ կարծես հասաչեց, սակայն լեզուն լուռ մնաց:  
Նորից խոսեց հայրը ծեր «մի՞ վախեցիր դու, որդիս,  
Նայիր՝ վշաի արցունքը դեռ չի սառել աչքերիս,  
Նայիր՝ ինչպես հայրենի մեր ամբոցն է այրվում,  
Ու գյուղերն են մոխրացել, խոսիր, ինչո՞ւ ես լուռամ,  
Միթե դո՞ւ ես, իմ որդյակ, դավադիրը մեղապարտ»...  
Հառաջում էր հայրը գեռ, լուռ էր որդին ու գունատ:  
— «Ես եմ» կարծես ասում էր լուռթյունը տղայի,  
Եվ իշխանը չչնջաց «Թող քեղ մահը փայփայի»  
Ապա՝ «Քըիր, իմ թաթուլ» ձիապանին ձայն տվեց,  
Եվ գեսի գուրն ամբոխի ձիապանը ձին քշեց...  
Հայրն էլ նրանց հետքերով գնաց տիուք ու մենակ  
Մի աչքի մեջ սև արցունք, մի աչքի մեջ սև կբակ...

Երբ հայտնիեց ձիապանն իր իշխանի որդու հետ  
Բաքի ելավ ամբոխը ու փրփրեց ինչպես դեռ,  
Նայեց որդուն իշխանի ու մռնչաց «մահ զրան»...  
Տղան ահից զունատվեց, արցունքները վար ընկան,  
Սակայն հայրն էլ հայտնիեց սղաղեմ ու տրտմաշուք,  
Ու ձայն տվեց ամբոխին. «Ճանաչն մ եք սրան դուք»:  
— «Ճանաչում ենք, դե է դա» ամբոխն հովտում մռնչաց,  
Եվ իշխանը իր որդուն վերջին անդամ չչնջաց,  
— «Ասա՛, ինչո՞ւ դավեցիր, ասա՛ որդիս, մի խաբի,  
Քան հայրենի փուշն՝ ասա՛, վա՞րդն էր անուշ արաբի,  
Ասա՛ ի՞նչն էր թշնամու դայթակը ել քեզ հանկարծ»...  
Եվ իշխանը կարկամեց ու դայրույթի մեջ դողաց,  
Զեռքը դրեց իր սրին ու մի վայրկյան լուռ մնաց,  
Ապա նորից շոնչ առավ արդար մռունչն իշխանի,  
— «Խոսիր, ինչո՞ւ, ես դավել, հիմա քո հայրն ի՞նչ անի»—  
Ով էր խելքդ զողացել...»

### Լոեց իշխանն ու տղան

Ծունկի գալով մրմնջաց «Լեյլան՝ Խաճեն խալիֆի»...  
— «Լեյլան, աղջիկն արաբի» կրկնեց հայրը մռունչով,  
— «Լեյլան, Խաճեն խալիֆի» կրկնեց ամբոխն հառաչով,  
Ու շանթահար՝ ամեն բան ալեկոծվեց, աարսուաց,  
Մթնեց անհուն զարմանքով, և իշխանը մռնչաց.  
— «Քան հայրենի փուշն անուշ, վա՞րդն էր անուշ արաբի,  
Որ այդպես է, ով թշվառ, հիմի մեռնես դու պիտի,  
Ու գերեզման քեզ չի տա քո հայրենի հողն արդար,  
Հայրդ օձ չէր, բայց ինչո՞ւ դու օձի ձաւդ դուրս եկար»,  
Ու մթագնեց իշխանը, ապա դարձավ ամբոխին,  
— «Քան հայրենիքն իմ աղքատ՝ խոր չեմ սիրել ոչ մեկին,  
Քան իմ Շիրակն հայրենի՝ չկա ուրիշ անուշ բան,  
Ու թող մեռնի այս տղան»,—

### Առաց բանեց ու սրով

Կտրեց գլուխն իր որդու ու մռնչաց դայրույթով,  
— իսկ դու, վախկոս եղջերու, իսկ դո՞ւ ամբոխ Շիրակի,  
Ինչպես թողիր ոսովին սանձը քո սեդ նժույգի,  
Վահանդ՝ ի՞նչպես նրա գեմ դու ձգեցիր ու փախար,  
Ասա, ինչպես թողեցիր քո հայրենի հողն արդար,  
Վերջին կաթիլն արյունի թող խմեին քո սրտից՝  
Քան թե՝ նվաստ փախչեիր հայրենի տուն՝ քո արտից»...

Թայց քարացած ամբոխից մի ծերունի՝ շշնջաց .

— «Իշխան, բանակն արարի գողուն զարկեց ու հանկարծ . . .

Թե ամբոխը մի գետ էր, նա մի ծով էր տեղահան, —

Թե ամբոխը մի ծով էր, նա օվկիան էր, ո՞վ իշխան» :

Եվ իշխանի աչքերը սև արցունքով լցվեցին,

Զիսպանն էլ հառաչեց ու մոտ բերեց նրա ձին,

Իշխանն հեծավ ախրաղեմ, սուրբ օդիք մեջ ճոճեց,

Ասպանդակեց նժույգին ու ամբոխին ձայն ավեց .

— Հե՛յ, ճորերից դուրս ելեք, շինականներ Շիրակի,

Ելեք՝ ում ձեռքն ամուր է՝ ու ծարավ է նիզակի, —

Ավ սիրում է հայրենիքն ու չի ուզում դառնալ ճորտ,

Ավ չի ուզում մահն իրա, ով սիրտ ունի կրակոտ, —

Թող դա ինձ հետ, ետ խլենք մեր օջախը հայրենի . . .»

Ֆյուլես կանչեց իշխանը և ձայնի հետ իշխանի

Ռուքի ելավ ամբոխը . . . մի մարդու պես . . . ու զինվեց, —

Զիավորվեց և իր հայր իշխանի հետ արշավեց . . .

4.

Նման ահեղ հեքյաթում դիմով թմբած վիշապի՝

Դեռ քնած էր Շիրակում հողնած բանակն արարի,

Պահնորդները կիսավառ խարույկների մոտ կանգնած՝

Որը հսկում էր կես քուն, որը ճոճվում էր քնած, —

Միայն խալիքն էր արթում շրջում ինչպես մի պահնորդ

Խոհերի միջ ալեկոծ՝ ինքն իրեն տեր ու ճորտ . . .

Եվ մառափուղն էր կանգնել ինչպես փոված դորշ կապար,

Ծածկել դաշտեր ու դյուղեր, ծածկել ամեն լեռնապար:

Բայց ի՞նչ, այս ի՞նչ որոտաց, ջրվե՞ժ իջավ սև ամպից,

Պոտուահո՞ղմ բարձրացավ, թե՞ ծով հորդեց ափերից,

Ո՞չ, —իշխանն էր՝ կայծակեց՝ հանկարծակի արշավով

Ուղիղ գլխին բանակի, որ նիրհում էր անվրդով . . .

Այդ ամբոխն էր՝ արշավեց՝ հեղեղի պես՝ լեռն ի վար՝

Հաղած կռվի զրահներ, հեծած ձիեր մրրկավար:

Եվ խուճապեց շանթահար քնած բանակն արարի»,

Աղմուկ խուժեց ժունտաժուտ և բախվեցին տեղ-տեղի,

Աղեղներից նետերի ահեղ կարկուտ վար տեղաց,

Կրանները պոկվեցին, մրրկից դաշտն ու գոռաց,

Շողում էին, շառաչում զրահները տեղերից, —

Թիազմիկներն ալերախ ընկնում էին և նորից  
Ենում էին, արշավում, խոցում, զցում մեկ մեկու  
Եվ կատաղի էր դամնում արդեն կոփին ահարկու...  
— «Հանուն սստծո և ողու և հայրենի դաշտերի,  
Դիրեն արեք ոտնատակ» ձայնն էր իշխում իշխանի:  
Վրենջում էր ու թռչում զիշերաբաշ նրա ձին,  
Նետերն էին անձրեսմ լայնաղբահ իր կրծքին,  
Բայց իշխանը զարկում էր և ճեղքելով խոչ ու խութ  
Խնչպես որսկանն անտառում՝ խրվեց զորքի խորքը մութ:  
Սլանում էր նրա հետ քաջ ձիապանն իշխանի  
Միշտ իշխանին ակնդես՝ քանց պահապան աղալինի,  
Ծառս էր լինում նրա ձին՝ սստի չար նետի գեմ,  
Կրծքին զրահն էր զնդում՝ անխոցելի՝ ինչպես վեմ:  
Իշխանն իրեն մոռացած հա՛ զարկում էր ու զարկում,—  
Եվ իր տեղով մահն արդեն վրաններն էր խուզարկում:  
Հանկարծ, հեռվից, իր աչքին իր ամբոցը երևաց,  
— «Առաջ, ժամն է ըղձալի» իշխանն էլի որոտաց,  
Եվ հետամուտ խուժում էր շինականը Շիրակի,—  
Ով եկել էր եղանակ՝ տեր էր դարձել նիզակի,—  
Ով որ անդեն էր եկել՝ զինալառ էր սլանում,  
Եվ հայրենի ամբոցի քերծերին էր բարձրանում,  
Զորքն ամբոխած հորդում էր աղաղակով ցնծաղին,  
Խուճապում էր մթան մեջ ոսոին արդեն թողած ձին,  
Խուճապում էր ալեկոծ, ամբոց մտնում ահաբեկ,  
Փակում դմերը ու զարբաս, բայց չէր լոռում նա երբեք,  
Պարխապների բարձունքից հող էր թափում ու կրակ,  
Բայց խուժում էր ամբոխը դեպի բերդը կապուտակ.  
— «Առաջ», կանչում իշխանը, անդուլ վեր էր բարձրանում,  
Կարծես արդեն ամբոխին հաղթանակի էր տանում...  
Երբ որ անհայտ մի սև նետ ցցվեց քունքին իշխանի,  
Իշխանն ընկալ ձիուց ցած...—  
— «Իմ պահապան աղալինի»,  
Վերջին շնչով մըմնջաց ձիապանին իր խիղախ,  
Որ բոնել էր հսկայի թեքված գլուխն արնաշտղ,  
— «Ես մեռնում եմ, իմ ասպետ, բայց գեռ՝ մահս, մահս չար»  
Թող ամբոխը չիմանա, դու ամբոխին կովի տար,  
Թող գեռ զորքս չիմանա, չթուլանա իմ մահով,  
Դու կովեցիր քաջի պես, զուգվիր դու իմ զըահով,

Բող արաբն էլ շիմանա զորավարի մահս անդութ՝,  
Դե շուտ հագիր իմ զրացն և ծիրանիս, հեծիր շուտ,  
Շարունակիր մարտն ահեղ, մինչեւ խալիֆն անարդար,  
Զախիմակի լուլ՝ քեզ թողնի քո հայրենի հոգն արդար...»  
Ասաց իշխանն ու հանդավ, ձիապանը մռայլեց  
Մե հոնքերի ամպի տակ արցունքի լիճը փայլեց,  
— «Երդվում եմ քո աստուծով» նա մեռնողին չնջաց,  
«Մինչեւ ընկնի թշնամին՝ ես չեմ իշնի ձիուց ցած...»  
Եվ կվառեմ վանքի մեջ քո հիշատակն անվախճան  
Փոխած սակի մոմերի, գու չես մեռնի, ով իշխան»...  
Եվ պահելով սրբազն իշխանի զեխ ժայռի տակ,  
Հաղավ նրա ծիրանին և զրացներն, համարձակ  
Հեծալ նժույդն իշխանի ու ձայն ավեց ամբոխին,  
«Ասաջ քաջեր, ոլացիք, մտս մտս արեք ոսոխին»...  
Կարծես իշխանն էր ձայնում, կարծես կանչն էր իշխանի,  
Եվ հորդում էր ամբոխը, ինչպես ալիքն օվկյանի,  
Դեպի ամբոցն էր հորդում շայիղներով քերծաքար,  
Որն հետմակ էր խուժում, որը ձիով կուրար:  
Շաչում էին նետերը, ընկնում էին քաջեր շատ՝  
Թե իշխանի բանակից, թե թշնամուց հուսահատ.  
Ծառս էր լինում թաթուլի ու նժույդը սանձակոն  
Տեղերի տակ թշնամու ոլանում էր նա անխոց,  
Սլանում էր շանթի պես, տրորելով ոտքի տակ  
Մաղավարոներ, նիզակներ, թաթեր, զանգեր ու գիակ:  
Հանկարծ ահեղ աղմուկով, նման տեղատարափի՝  
Պարխապներից վար խուժեց ահեղ բանակն արարի,  
Ու ցած տեղաց նետերի ու մի կարկուտ խուզական,  
Եվ թաթուլի զորքն ասես տեղի տվեց մի վայրկյան,  
Ու ընական շատ քաջեր նժույդներից ընկան ցած՝  
Խոցումելով ոսոխի նիզակներով մոլեզնած,  
Տրորվեցին ոտի տակ արաբական ձիերի  
Եվ խութ դարձավ զորքի դեմ շեղն արնաքամ դիերի:  
Եվ դեռ ծովի պես ելած՝ կիշներ բանակն այն արար՝  
Թիկնահներով ամբոխին, չեղեղլելով շափեափի:  
Եվ խոցվելով հարձակվող նիզակներից կատաղի՝  
Հասաչում էր, նահանջում աշխարհազորն ամբոխի:  
Լոկ մի վայրկյան թաթուլը մոր սրտի պես կծկծվեց,  
Եվ քաջեց սուրբն իշխանի և ամբոխին ձայն տվեց.

— կամ մահ, քաջեր Շիրակի, կամ թե Հայկյան Հաղթություն,  
Մեր բաժինը կյանքն է միշտ, մահը տվիք թշնամուն,  
— «Առաջ, առաջ» և ձայնը թեր տվեց իր զորքին,  
Եվ ամբոխը մրրկվեց նոր գրոհավ մոլեգին,  
Եվ նրա գեմ արարի տեղերն ընկան ահառած,  
Դիեր գարձան առաջափա կարիճները՝ խոցոտպած,  
Եվ ամբոխը քայլ առ քայլ նիզակվում էր միշտ առաջ,  
Բարձրանում էր ժայռերը, դիեր փոռում ձախ ու աջ:  
Եվ իշխանի տարազով՝ դլուխն անցած բանակի.  
Խոյանում էր Թաթուլը նման թոչող նիզակի:  
Հանկարծ սմբակիլ ձիու խրվեց մի գորշ գամողի մեջ  
Գանգը մնաց սմբակին՝ երբ ձին նորից արշավեց,  
Այս, ո՞ւմ զանդն էր, որ զերվեց Հայոց ձիու սմբակին,  
Արդյոք արար մի աղքատ, որ թողել էր մայր ու կին.  
Եվ խալիֆի կեռ թրի ահն ու արյունն աչքերում  
Դուրս էր եկել ափարի՝ Հայոց ոսկի գաշտերում...  
Արդեն զիշերն անցնում էր, այդ էր ասես օսկերոց,  
Սմբոխն հորդում էր արդեն՝ արդեն մտնում էր ամբոց  
Նիզակների, տեղերի անտառներով ալեկոծ:  
Մահախուճակ փախչում էր արդեն բանակն արարի՝  
Ինչքան խալիֆն իր կանչով սանձը քաշեց խուճապի...  
Ճննչացին ամբոցի գարպաները կաղնեկուու  
Եվ ներս խուժեց ամբոխը ձիով, ոտքով, խառն ի խուժ,  
Բայց Թաթուլը փնտրում էր զե խալիֆին, որ չկար,  
Ու անհամբեր զայրույթից ձեռին սուրը կդողար...  
«Դեռ փախակ խմ տեղից» նա տիրապին չչնջաց,  
Եվ խաղաղվող դաշտերին նայեց մի պահ ու ժպտաց,  
Հանկարծ ինչպես երազում՝ հեռվում տեսավ խալիֆին,  
Հեռվում տեսավ, ծիծաղեց ու խթանեց, քեց ձին,—  
Հասավ, —տեսան մեկ մեկու, և խալիֆը ինչպես ամպ  
Նետեց նիզակն իր նշտար՝ ամենազոռ սաստկությամբ,  
Բայց նիզակը փշրվեց իշխանի կուռ զրահին՝  
Քանց ապակին արմաստից...  
Եվ խալիֆը խթեց ձին

Ու սարսանիով դուրս փախակ կովի դաշտից մահասաստ,  
Փոշին թողեց դաշտի մեջ՝ որպես զրոշն իր՝ նվաստ,  
Հետ չէր նայում, փախչում էր սահմանն ի վայր Շիրակի,  
Բայց կարող էր ազոավը փակչէլ զարկից կայծակի...  
26

Եվ՝ թոշում էր հետեւից Թաթուլն հեծած հրաշք ձին,  
Որ հասնելով խալիֆին՝ «կանգնիր» դոչեց զայրադին,  
Եվ նիզակը շառաչեց և խալիֆը ընկալ ցած  
Եվ արյունը դուրս ցայտեց ու բաց առվի պես գնաց...  
Եվ մոտեցավ Թաթուլը ու ցած նայեց նժույգից,  
Ու վեր նայեց խալիֆը թուի աչքերով արնալից,  
Եվ հառաջեց այն մթին զորավարը մերձիմահ.  
— «Թե ևս մեռնեմ, ով թշվառ, զու կենդանի չես մնա»  
Երկրորդ հարվածը դարձավ պատասխանը իշխանի՝  
— «Թե զարկն իմն է, ով հրեց, քու չես մնա կենդանի»:  
Ասաց Թաթուլն ու նայեց իր հայրենի ամբոցին,  
Որի զմբին կծփար հայոց գբոշն այդածին:  
Ասպա նայեց կարստով արշալույսին նոր ծագող,  
Որ փարվում էր լեռներին, ինչպես հարսի ոսկեքող:  
Դաղարի փողն ճնչեցուց, հորդեց ամբոխն իրեն մոտ,  
Կապուտեցին շղթայով գե խալիֆի ձեռն ու ոտ,  
Եվ իշխանը խաղաղվեց, նայեց զորքին ու ժպտաց,  
Եվ դառնալով խալիֆին նրան այսպես շնչաց.  
— Զեռքը կուզեր հարկ առնել՝ ամեն կանաչ կիրակի,  
Ասա, սի՞րտ ինչ կուզեր՝ իշխա՞ն լինել Շիրակի,  
Թե՞ կուզեիր թաղաղոր գառնալ երկրին իմ հայոց, —  
Ժողովրդի մեջքն ի վեր փաթաթվեիր ինչպես օձ...  
Բայց, եկ արքա օծենք քեզ, —

Ասաց իշխանն ու լոին

Նայեց մի պահ մտախոչ՝ դեմը վառվող խարույկին,  
Ապա ծնկին ծռելով լայն շեզը մի թուր օղակեց,  
Եվ օղակը թաղատիս՝ բոց խարույկի մեջ դժեց, —  
Աշխուժացավ ամբոխը՝ կռահելով ինչ որ բան...  
Մեկ նայում էր խարույկին, մեկ իշխանին հաղթական,  
Ապա իշխանն աղոթքով «աե՞ր, թողությո՞ւն» շնչաց,  
Ու զուրս հանեց խարույկից օղակն արդեն շիկացած,  
Ու չարախինդ մոտեցավ դրեց գլուխն այն դեի՝  
Թագագրեց նա այդպես գլուխը գե խալիֆի...  
— «Ահա՛ քո թաղը ոսկի» իշխանն ասաց խալիֆին,  
«Այդ մեր հարկի ոսկին է, թող միշտ չողա քո զլինին,  
Եվ թե ուժի կպատե՝ զմբիդ պահած Բաղդադ տար,  
Որ աշխարհներն իմանան, թե ո՞նց հայոց հարկն առար...»  
Մի պահ սարսեց ամբոխը, ապա աղմուկ խլոտաց

— «Ով մեր արքա, քեզ համար աստված կի՞նե դահից ցած», —  
— «Ա՛, ո՞նց թաղենք հիմա քեզ առանց սուլ ու շիվանի».  
Աւ՝ ծխում էր, ձենձեռում գանգը Մարա տիրանի, —  
Այն ինչ լեռներն հիացքով հագնում էին ծիրանի:

Եվ շողում էր վանքն արդեն արշալույսի ճաճանչով  
Եվ իշխանը վանքի գեմ խաչակնքեց շունչով,  
— Օրհնյալ երկինք, փառքու շատ, նորից հացը դարձրու ծով =  
Եվ արեղակն էր ծաղում նման լուսե նիզակի,  
Որ խոցել էր սիրալ ոև գիշերի ոև բանակի:  
Բայց արտուտներ չերչեցին այս առավոտ ջինջ օդում,  
Լոկ ուրուրներն հիացքով դիերն էին հոշոտում,  
Ագուալները ճախրեցին դաշտի գլխին արյունով,  
Ուր՝ գիտապատ դի գարձան արարն ու հայն իրար մոտ,  
Մահու մոռայլ տեսիլքով անիծելով՝ մշտաղետ  
Խալիֆների արշավը և թալանի երթ ու նետ...  
Ո՞հ, անեծք քեզ, ո՞հ, մահ քեզ պատերազմի չար ողի,  
Մեկին գավաթ ես դինու, թույն ես՝ ընդզեմ ամենքի...  
Եվ իշխանը ձայն տվեց, թաղել դիերն հարազատ,  
Դաղա՛ր կովին, հաղթություն, ինկենք հայոց հողն աղատ,  
Ողջ ավարը ձեղ տարեք, ինձ մի վրան թողեք լոկ,  
Խաղաղությունը՝ վանքում խնկարկեցեք ծնկաչոք...  
Խուժեց ամբոխն ավարի աղաղակով ցնծագին,  
Եվ իշխանը թողնելով համհարզի մոտ իրեն ձին,  
Ամրոց մտավ ժապաղեմ ու խալիֆի շղթայած  
Հայոց լուսե աղավնի աղջիկներին թողեց բաց,  
Որոնք ասես մի դարնան ավետիքով սիրավաս.  
Օրհներդեցին իշխանին՝ որպես իրենց հորն արդար...  
Բայց թաթուլը մոայլվեց ու ամրոցից ցած իջավ, —  
Երբ որ հիշեց իշխանին ու... լուռ վանքին մոտեցավ  
Ու ձայն տվեց ամբոխին ու ծովացան վանքի մոտ  
Ճինականներն՝ ուղղմի նիզակներով դեռ արնոտ,  
Եվ թաթուլը տիրագեմ նայեց՝ ուրախ ամբոխին,  
Հանեց հագից՝ իշխանի արյունավառ ծիրանին  
Ու՝ հայտնվեց ամեն բան...

Եվ ամբոխը շվարած

Զիապանին էր նայում, իսկ նա այսպես շշնջաց.

— «Մի՛ զարմացեք, ով այրեր, հիմա կասեմ ամեն բան,

Հայր Արտավազը իշխանը ձեղ է թողել իր ճամբան, —  
Ծնկավ՝ քունքից նետահար՝ երբ հասնում էր ամբողին...  
Բայց նա ընկալ հաղթական և ինձ թողեց նա իր ձին,  
Վրաս ձգեց ծիրանին և չնչաց՝ «Ճահս թող  
Շինականը չխանա՝ չթուրանա իմ մահով», —  
Իսկ դու նրան կովի տար» և ձեղ կովի տարա ես,  
Առյուծը չեմ մեր իշխան, բայց չեմ եղել ես աղվես, —  
«Հայրենիքի արել հանիր ամպից դժնղակ».  
Այսպես՝ ասաց իշխանը շունչը փէց ժայռի տակ...  
Իսկ ես կովի տարա ձեղ...».

Սաաց, լոեց գլխիկոր...

Եվ ամբոխն մի վայրկյան պատեց թախիծը պղտոր,  
Ու... զիակը վանք տարան և աղոթքով մի տրտում,  
Վառին այլեր վանքի մեջ մոմերն իբրև հաղթություն, —  
Եվ գլխիկոր ամբոխը աղոթախոս հեծեծում  
Օրհներդում էր իշխանին, իբրև իրա ասածուն...

Խաղաղությունն այն ժամից կամար կապեց մեր հանդին,  
Հայոց ոսկի գաշտերում զնդաց հայոց գերանդին,  
Արտուտները արտերից թուան աշխարհ ու երկինք,  
Հայոց հնձերդն հիացքով տարան որպես ավետիք...

#### Ա Ե Ր Զ Ե Ր Գ.


Եվ ինկելի մազաղաթն հուսկ այտես էր բարբառում.  
— «Ավարտվեցավ և սիրտս հուսո կանթեղն է վառում,  
Որ հաղթությունն այս անճառ, լուսո խորհուրդն այս բարի  
Դարեր կանցնի թոռից թոռ՝ իբրև արյուն պապերի,  
Եվ գուք՝ գարեր կղառնաք անհաղթ վահանն հայրենյաց՝  
Թարժան լինեք սերունդներ դյուցաղնասիրտ ձեր նախնյաց»...

\*\*\*

Հեռուն է տեսնում հիմա իմ հոգին,  
Կարմիր վաշտերը կը հաղթանակեն,  
Ես հավատում եմ լույս հաղթանակին,  
Կարմիր դնդերը կը հաղթանակեն,  
Ղողանջող դանդ է երգա աշխարհքին,  
Կարմիր զորքերը կը հաղթանակեն,  
Արձագանքում է աշխարհն իմ երգին՝  
Կարմիր բանակներն կհաղթանակեն :

ԹՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծի ձայնը	3
Հերոսություն	4
Տարեք	6
Մեր լեռերի պես	7
Ես էլի կզամ	8
Կաղ զինվորը	8
Գարսիզանները	9
Հայրենիքիս	10
Դավթի թռոները	10
Ամենանվիրականը	11
Տիգրան մեծի վիշտը	13
Իւրին հավերժ է	17
Պոեմ հայրենական	18
Վերջերդ	29
***	30



Պատիսմբագիր Դ. Սարյան

Վ. 1850 Պատգեր 266. Տիրաժ 3000. Տպագրական

2 մամուլ. Մեկ մամուլում 38400 նշան.

Ստորագրված է տպագրության 17/IV—42 թ.

Հայոց տնհատի տպարան, Երևան, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220050082

4112 2 n.

A. II  
50082

300